ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը «ՀՊՏՀ շրջանավարտ 2012» միջոցառման ժամանակ

Հարգելի հյուրեր, գործընկերներ, սիրելի՛ շրջանավարտներ,

Այսօր մեր բոլորի համար հիանալի տոն է. մենք ամփոփում ենք աշխատանքային հերթական շրջափուլը՝ թողարկելով մասնագետների հերթական սերունդը:

Հետևում թողնելով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում Ձեր ուսումնառության տարիները՝ այսօր Դուք՝ սիրելի շրջանավարտներ, ստանում եք ավարտական դիպլոմներ՝ արձանագրելով Ձեր ներդրած ջանքերի արդյունքը:

Հարգելի շրջանավարտներ,

Բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթ ունենալը ոչ միայն հպարտանալու առիթ է, այլ նաև՝ բարձր պատիվ յուրաքանչյուրի համար:

Այս տարիներին Տնտեսագիտական համալսարանն իր ամբողջ ներուժն ու հնարավորությունները ներդրել է Ձեզ ժամանակակից գիտելիքներ փոխանցելու համար: Այդ լուրջ և պատասխանատու գործում իրենց անուրանալի վաստակն է ունեցել մեր բուհի հեղինակավոր պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Սիրելի շրջանավարտներ,

Այսօրը որքան ուրախալի, նույնքան էլ պատասխանատու է, քանզի ավարտելով Տնտեսագիտական համալսարանը և ստանալով ավարտական դիպլոմները՝ Դուք մտնում եք մեծ կյանք, որտեղ էլ փորձառության են ենթարկվելու ոչ միայն Ձեր ստացած գիտելիքներն ու մասնագիտական հմտությունները, այլ նաև՝ մարդկային հատկանիշները։

Գաղտնիք չէ, որ շուրջ մեկ տարի է, ինչ մեր բուհը «Մենք փոխվում ենք» կարգախոսի ներքո ընթանում է բարեփոխումների ճանապարհով, որի ականատեսն ու մասնակիցն է եղել նաև Ձեր սերունդը։ Հուսով ենք, որ բուհից հեռանում եք միայն լավ տրամադրությամբ ու տպավորություններով, գիտելիքների մեծ զինանոցով և որպես մասնագետ ինքնահաստատվելու աննկուն վճռականությամբ։

Ավելի քան վստահ եմ, որ եթե նույնիսկ այս տարիներին ունեցել եք տխրության պահեր, հանդիպել եք դժվարությունների, միևնույնն է, հետագա տարիներին միայն ջերմությամբ եք հիշելու ուսումնառության Ձեր տարիները։ Ուսանողական կյանքի հուշերը, ինչպես ցույց է տալիս կյանքը, ամենահիշարժաններից են, ուստի մաղթում եմ, որ Ձեր ուսանողական հիշողությունները միշտ մնան քաղցր և երբեք չխամրեն։

Թեև այսօր Ձեզ ճանապարհում ենք, սակայն հուսով եմ, որ կպահպանվի շրջանավարտների հետ հետադարձ կապի ավանդույթը:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք, անձնական երջանկություն և, անշուշտ, մասնագիտական ու աշխատանքային հաջողություններ: Թող որ Տնտեսագիտական համալսարանում Ձեր ստացած գիտելիքները իսկապես դառնան այն կարևոր հենարանը, որի վրա կկերտվեն Ձեր աշխատանքային կենսագրությունը և անձնական հաջողությունները:

«Ուզո՞ւմ ես տեսնել մի ժողովրդի ապագան, նայիր նրա երիտասարդությանը», - ասում էր Նժդեհը: Եվ այսօր, նայելով այստեղ հավաքված երիտասարդությանը, ես վստահ եմ, որ ի դեմս Ձեզ՝ մենք ունենք հիանալի սերունդ, որն ի զորու է կերտելու լավագույն ապագա իր Հայրենիքի համար:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բարի երթ Ձեզ, սիրելի շրջանավարտներ:

ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյան